**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3**
**№ ԲՄԱՊՁԲ-7/20-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 26 .02. 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ.Զարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 13.03.2018թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-7/20-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **115 901 600 (մեկ հարյուր տասնհինգ միլիոն ինը հարյուր մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք.Երևան, Դավթաշեն 10 փողոց, տուն 71 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Արմսվիսբանկ» ՓԲԸ, |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2500010115510100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01209339 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | տնօրեն |
| ՆՏԱ դեպարտամենտի պետ | |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Հ. ԶԱՐՉՅԱՆ |

**Հավելված N 1**
№ ԲՄԱՊՁԲ-7/20-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակ | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2020թ. | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս |
| 1 | Երշիկ, կիսաապխտած (Կիսաապխտած երշիկ | կգ | 62990 | 1840 | 115901600 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 10000 | 12990 |
| **Ընդամենը** | 115 901 600 (մեկ հարյուր տասնհինգ միլիոն ինը հարյուր մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ | | | | | | | | | | |

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ ք.Երևան Սարմի 103:

**Հավելված N 2**
№ ԲՄԱՊՁԲ-7/20-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Երշիկ, կիսաապխտած (Կիսաապխտած երշիկ | 15131122/1 | 18400000 | 36800000 | 55200000 | 73600000 | 92000000 | 115901600 | 115901600 | 115901600 | 115901600 | 115901600 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ պաշտպանության նախարարության<br>ՆՏԱ դեպարտամենտի պետ<br>Ն. ՅՈՒՂՅԱՆ | «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ<br>ք.Երևան, Դավթաշեն 10 փողոց, տուն 71<br>«Արմսվիսբանկ» ՓԲԸ,<br>Հ/Հ 2500010115510100<br>ՀՎՀՀ 01209339<br>տնօրեն<br>Հ. ՉԱՐՉՅԱՆ<br>լ/ա 008463788 |